Հաշվետվություն

Գյումրու թիվ 1 ավագ դպրոցի ուսումնական գծով փոխտնօրենի

2022-2023 ուսումնական տարվա կատարած աշխատանքների

Հաշվի առնելով հունիսյան նախնական կոմպլեկտավորումն ու դասաբաշխումը, նախապատրաստել և մանկավարժական խորհրդի նիստի քննարկմանն է ներկայացվել 2022-2023 ուստարվա ուսումնական պլանը, սահմանված կարգով կատարվել դպրոցական պարտադիր բաղադրիչի բաշխումը, առարկայական մասնախմբերի նիստերում իրականացվել դասաբաշխումը, մասնակցել տարիֆիկացիայի կազմմանը, կազմել դասացուցակ՝ պահպանելով դասացուցակի պահանջները: Սահմանված կարգով, մշակվել է ուսուցիչների աշխատաժամանակի բեռնվածությունը՝ ելնելով նրանց շաբաթական ժամաքանակի ծանրաբեռնվածությունից ու դրա հիման վրա կատարվել ամենօրյա հաշվառում:

Ուսուցիչները ապահովվել են ուսումնական ծրագրերով: Առարկայական մասնախմբերի աշխատանքային, ինչպես նաև ուսուցիչների թեմատիկ պլանները կազմելիս առաջնորդվել ենք ՀՀ ԿԳՄՄՆ-ի հանձնարարականներից, ԿԶՆԱԿ-ի ուղեցույցներից և մեթոդական նյութերից: Դպրոցում գործում է երեք մասնախումբ, որոնք հիմնականում կատարել են ծրագրով նախատեսված աշխատանքները, չնայած որ եղել են նաև բացթողումներ: Կատարվել է ամենօրյա ուսուցչական, աշակերտական հաճախումների ստուգում, կանխվել անհարգելի բացակայությունները և ուշացումները: Կազմակերպվել է ներդպրոցական օլիմպիադա բոլոր առարկաներից, և արդյունքների հիման վրա ապահովել աշակերտների մասնակցությունը ինչպես տարածքային, այնպես էլ ՝ մարզային օլիմպիադային: Թվով 9-ը աշակերտներ մասնակցեցին հանրապետական օլիմպիադային, սակայն արդյունքը գոհացուցիչ չէր. Հակոբ Այվազյանը ռուսաց լեզվից շահեց գովասանագիր, իսկ ինֆորմատիկայից երրորդ կարգի դիպլոմ: Մասնակցել ենք նաև Պրոգրես համալսարանի կողմից կազմակերպված օլիմպիադային

Մասնակցություն ենք ցուցաբերել Չեխիայի տնտեսագիտական կրթության ինստիտուտի (INEV) նախաձեռնությամբ իրականացվող տնտեսագիտական օլիմպիադային. մեր 10 տնտեսագետները փորձեցին իրենց ուժերը՝ գրանցելով բավականին բարձր արդյունքներ:

Հայաստանի ամերիկյան համալսարանում 12-րդ դասարանի աշակերտ Վլադիմիր Համբարձումյանը մասնակցություն ցուցաբերեց ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ հանրապետական փուլին, որին մասնակցելու իրավունք էր ստացել դպրոցական փուլը հաղթահարած 36 աշակերտ:

Կազմվել են հունվարին, հունիսին քննության մասնակից սովորողների ցուցակները՝ դիմումների հիման վրա, ձևավորվել են հանձնաժողովներ: Տարվա ընթացքում անցկացվել են 103 ժամ դասալսումներ դասավանդման արդյունավետությունը ստուգելու նպատակով, կատարվել դասալսումների հիմնավոր և արդյունավետ քննարկումներ: Մեթոդական օգնություն է ցուցաբերվել մանկավարժական ոչ բավարար փորձ ունեցող /սկսնակ/ ուսուցիչներին: Ստուգվել է ուսուցչի ծրագրերի կատարողականը, թեմատիկ պլանների և էլեկտրոնային դասամատյանների գրանցումների համապատասխանությունը, ուսուցչի օրինակելի փաթեթի առկայությունը, ուսումնական ծրագրերի կատարողականը /քանակական և որակական առումներով/: Պարբերաբար ստուգվել է էլեկտրոնային մատյանների վարման, գնահատման, ժամանակին լրացնելու վիճակը, գրել դիտողություններ և կազմել ամենամյա եզրակացություններ:

Որոշակի պարբերությամբ ստուգվել է օրվա աշխատանքային պլանները, համադրվել թեմատիկ պլաններին, հիմնավորվել համապատասխանությունը:

Դպրոցի տնօրենությանը անհանգստացնում է աշակերտների ուսման որակի հարցը. այս առումով ուսուցիչները պետք է շարունակեն որոնել, գտնել աշակերտների հետաքրքրությունը խթանող նոր ուղիներ ու մեթոդներ:

Ապահովվել է ուսուցիչների մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին և ատեստավորման գործընթացին: Դասալսումների միջոցով պարզվել է, թե ինչ մեթոդներով է աշխատում ուսուցիչը, ինչպես է կատարվում նյութի հաղորդման, յուրացման, ամրապնդման, ստուգման աշխատանքը, ինչպես է

ապահովվում պետական չափորոշիչների պահանջները: Դասալսումների, քննարկումների, աշակերտների առաջադիմության ուսումնասիրման միջոցով գնահատվել է ուսուցչի աշխատանքը և անհրաժեշտության դեպքում կազմակերպվել մեթոդական օգնություն:

Իմ կողմից կատարվել է էլեկտրոնային դասամատյանի ամենամսյա վերահսկողություն, կազմվել են արձանագրություններ, մշակվել թերությունների շտկման քայլերը:

2022-2023ուստարվա տարեկան ընդհանուր առաջադիմությունը կազմում է 99 %, իսկ որակական առաջադիմությունը՝ 63 %: Առաջադիմության մեջ գերակշիռ են 7-8 միավորները: Տարեկան գերազանց առաջադիմություն ունեն 39 աշակերտներ, իսկ հարվածային՝ 63 -ը: Ունենք մեդալի 6 հավակնորդներ:

Բացակայության պատճառով չեն փոխադրվում 11-րդ գ դասարանի աշակերտուհիներ՝ Սիրանուշ Գասպարյանը՝273 ժամ և Ժաննա Գրիգորյանը՝ 907 ժամ: Դպրոցի աշակերտների բացակայությունների ընդհանուր թիվը 4198 ժամ է:

Մի փոքր էլ անդրադարձ կատարենք 2022-2023 ուսումնական տարվա 1-ին և 2-րդ կիսամայկների ընթացքում կատարված աշխատանքներին՝ ըստ մասնախմբերի:

2022-2023 ուսումնական տարին սկսեցինք նախորդ ուսումնական տարվա գերազանցության մեդալի արժանացած աշակերտների պարգևատրմամբ: ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում գերազանց առաջադիմությամբ շրջանավարտներ՝ Էդուարդ Վարդանյանին և Մուրադ Սարաֆյանին գերազանցության մեդալներ հանձնեցին ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը և նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը:

Սեպտեմբեր ամսին ուսուցիչների կամավոր ատեստավորմանը մասնակցեցին և բարձր միավորներ վաստակեցին Նաիրա Թադևոսյանը, Կարինե Զիլֆիմյանը, Արտավազդ Սանթրոսյանը, Էդգար Մանուկյանը:

«Դասագրքաստեղծման աշխատանքներում ուսուցիչների մասնակցություն» ծրագրում ներգրավվեցին տնօրեն Նաիրա Թադևոսյանը և Լաուրա Գրքիկյանը:

Ռուսաց լեզվի ուսուցչուհի Լ. Աբաջյանին շնորհվել է որակավորման բարձրացման վկայական Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի կողմից:

Բնագիտամաթեմատիկական մասնախմբի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները:

- Այցելություն Արփի լիճ՝ կենսաբազմազանության դիտարկում կատարելու նպատակով՝ ուս. Գոհար Աճիկյան
- Փորձերի արդյունավետությունը ֆիզիկայի դասերին Ջրափիի դպրոցի աշակերտների մասնակցությամբ՝ ուս. Էլլա Չոմարյան
- Բաց դաս կենսաբանությունից՝ «Փոխհարաբերությունների ձևերը կենդանի օրգանիզմներում»՝ ուս. Գոհար Աճիկյան
- «Կոլումբոսի հետքերով» թեմայով բաց դիտում աշխարհագրություն առարկայից՝ ուս. Աստղիկ Հովսեփյան
- «Երկրաշարժը որպես մարդկության մեծագույն չարիք» արտադպրոցական դաս ՀՀԱԻՆ ՍՊՏԾ ԲՏԱԲ_ի հյուսիսային տարածաշրջանային կենտրոնում՝ ուս.՝ Աստղիկ Հովսեփյան

2-րդ կիսամյակի ընթացքում բնագիտամաթեմատիկական մասնախմբի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Անցկացվեց բաց դաս «Աղմուկի առաջացման պատճառները և ազդեցությունը» թեմայով Էլլա Չոմարյանի և Նաիրա Մաթևոսյանի նախաձեռնությամբ: Դասի ընթացքում բացատրվեց, թե ինչպես են առաջանում ձայները, ինչ է ձայնային ալիքը, որ միջավայրում կարող է տարածվել ձայնը:

Մաթեմատիկայի ուսուցչուհի Մ. Գյուլբեկյանի կողմից անցկացվեց բաց դաս՝ նվիրված Π թվի ծնունդին հումանիտար հոսքի 11-րդ դասարանում:

Համալրելով հետաքրքիր և կիրառական նշանակություն ունեցող դասերի շարքը՝ 10 դ դասարանում աշխարհագրության ուսուցչուհի Ա.Հովսեփյանն անցկացրեց ՏՀՏ միջոցներով, նոր չափորոշիչներին համապատասպան բաց դաս: Դասի նպատակը աշակերտներին կիրառական գիտելիքներ տալն ու պետության կառավարման ձևերին ծանոթացնելն էր:

Արտավազդ Սանթրոսյանի կողմից անցկացվել է «Ազատ անկման արագացման որոշումը մաթեմատիկական ճոճանակի միջոցով» լաբորատոր աշխատանքը:

Նաիրա Մաթևոսյանի կողմից անցկացվեց «Գիտե՞ս արդյոք» էկոլոգիական խաղը:

Էդգար Մանուկյանի կողմից անցկացվեց «Ապագայի տեխնոլոգիաները» թեմայով բաց դասը:

Լուսինե Նազարյանի կողմից անցկացվեց «Բուրգ, հատած բուրգ» թեմայով բաց դասը:

Բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման կողմից իրականացվել են հետևյալ նախագծային աշխատանքները.

Աշխարհագրություն՝ Երկրագնդի կանաչ թոքերը /Աստղիկ Հովսեփյան/

Կենսաբանություն՝ Չարիքը մարդկության գրպանում/Գոհար Ածիկյան/

Ֆիզիկայի ուսուցիչ Էլլա Չոմարյանի կողմից lib.armedu.am կայք է ներբեռնվել վիդեոդաս Լրիվ մեխանիկական էներգիա թեմայով:

Առաջին կսամյակի ընթացքում իրականցվեցին հետևյալ աշխատանքները.

Իրականացվել են տեսանյութերի, ֆիլմերի դիտում-քննարկումներ՝

ա) «Գուրգեն Մահարի», «Նաիրի Զարյան», «Պարույր Սևակ» թեմաներից 12-րդ, «Հովհաննես Թումանյան», «Ավ. Իսահակյան» թեմաներից 11-րդ, «Հայոց գիրը», «Գ. Նարեկացի», «Սայաթ-Նովա» թեմաներից 10-րդ դասարաններում (ուսուցիչ՝ Կ. Զիլֆիմյան),

բ) «Ազատագրական պայքարը Սյունիքում» թեմայի շրջանակներում «Հուսո աստղ / Մխիթար Սպարապետ» ֆիլմը՝ 11-րդ դասարանում (ուսուցիչ՝ Մ. Ալեքսանյան):

Բաց դասեր.

ա) Բաց դաս Հ. Թումանյանի տուն-թանգարանում (ուսուցիչ՝ Նաիրա Թադևոսյան)

բ) «Արտաշես Ա Բարեպաշտ» թեման՝ «Աշխարհացույց» կայքով, 10-րդ դասարան, (ուսուցիչ՝ Լաուրա Գրքիկյան):

3.Արտադպրոցական դասեր.

ա) «Պատերազմի հայ հերոսներն ու զորամիավորումները» (Մայր Հայաստան հուշահամալիրում, 12-րդ դասարան, (ուսուցիչ՝ Լաուրա Գրքիկյան):

բ) «Վանի թագավորություն» (Էրեբունի, Շենգավիթ, Կարմիր բլուր հնավայրերում), 10-րդ դասարան, (ուսուցիչ՝ Լաուրա Գրքիկյան):

գ) «Շիրազի հայրենասիրական քնարը», Պատվո բլուրում (ուսուցիչ՝ Կ. Զիլֆիմյան),

դ) «Հ. Շիրազ» թեմայով դաս Շիրազի տուն-թանգարանում, 12-րդ դասարաններ, (ուսուցիչ՝ Լալա Գրքիկյան):

ե) «Ճանաչենք մեզ» Հաղարծինում, Գոշավանքում 11-րդ դասարան, (ուսուցիչ՝ Մ. Ալեքսանյան):

զ) Այցելություն «Հայուհի» թանգարան, 10-րդ դասարաններ, (ուսուցիչ՝ Ա. Հարությունյան):

է) Զրույց Արմեն սարկավագ Իսահակյանի հետ Յոթվերք եկեղեցիում , 10-րդ դասարան, (ուսուցիչ՝ Ս. Կիրակոսյան):

4. Մրցույթներ.

ա) Եվրոպական միության կողմից հայտարարված «Շրջանակային տնտեսագիտությունը և աղջիկները» 8 ենթամրցույթներում աշակերտներ Ալվարդ Չարխիֆալաքյանը և Լիզա Մալոյանը գրավել են առաջին հորիզոնականը:

Տեսանյութերի ստեղծում:

ա) «Արվեստի ճյուղերը և ուղղությունները» թեմայով (ուսուցիչ՝ Ա. Հարությունյան):

բ) «Զիու առասպելաբանական պատկերացումները և պաշտամունքային դրսևորումները (ուսուցիչ՝ Կ. Զիլֆիմյան):

գ) «Գյումրու ֆայտոնը» (ուսուցիչ՝ Կ. Զիլֆիմյան):

7. Սեմինարներ են անցկացրել

ա) Լաուրա Գրքիկյանը՝ «Ձևավորող գնահատում» թեմայով (համադպրոցական սեմինար),

բ) Ա. Հարությունյանը՝ «Ինտեգրված ուսուցման ձևերը և նախագծային աշխատանքի կազմակերպումը» թեմայով սեմինարի վարում:

Ընթերցվել են գիտամանկավարժական զեկուցումներ ուսուցիչներ Լալա Գրքիկյանի, ՝ Ս. Կիրակոսյանի, Շ. Գասպարյանի կողմից:

10.Կատարվել են դասալսումներ ՄՄ անդամների կողմից:

Երկրորդ կիսամյակի ընթացքում իրականացվեցին հետևյալ աշխատանքները.

1.Անցկացվեց դաս-բանավեճ 10դ դասարանում հայ գրականություն առարկայից ուսուցչուհի Լ. Գրքիկյանի կողմից, որը նվիրված էր 10-րդ դարի անցքերի, մարդկային թուլությունների ըմբռնելի, բայց մերժելի սահմանների բացահայտմանը, պատմական հերոսների ճանաչմանը մեծ վիպասանի՝ Մուրացանի օգնությամբ:

2.Լալա Գրքիկյանի կողմից անացկացվեց նաև Դ. Դեմիրճյանի «Վարդանք» դաս-դատավարությունը 11բ դասարանի աշակերտների մասնակցությամբ և Հ. Թումանյանի 154 ամյակին նվիրված դասը 12ա դասարանի աշակերտների մասնակցությամբ:

3.Տնօրեն Նաիրա Թադևոսյանի նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ ակտիվ մասնակցություն ենք ցուցաբերել «Մեր մայրենին ամենուր» արշավին, որը կազմակերպել էր ՀՀ ԿԳՄՍՆ:

4.Ուսուցչուհի Լաուրա Գրքիկյանի կողմից կազմակերպվեց բաց դաս՝ ինչպես աշխատել սկզբնաղբյուրների հետ, որը կարևոր միջոց է միջառարկայական կապ ապահովելու և զարգացնելու տեսանկյունից: Դասն անցկացվեց 10դ դասարանում «Քրիստոնեության հռչակումը պետական կրոն» թեմայով:

5.Կարինե Ջիլֆիմյանի կողմից անցկացվեց «Հոմանիշներ և հականիշներ» թեմայով բաց դասը 10ա դասարանի աշակերտների մասնակցությամբ:

Հայագիտության մեթոդմիավորման կողմից կազմակերպվել են նաև մի շարք արտադպրոցական դասեր և ճանաչողական էքսկուրսիաներ:

Իրականցվել են հետևյալ նախագծային աշխատանքները.

1. «Ձիեր» թեմայով հայոց լեզվից, ազգագրությունից և հայոց պատմությունից ուսուցիչներ՝ Կ. Ջիլֆիմյանի, Լալա Գրքիկյանի, Մանե Ալեքսանյանի ղեկավարմամբ:

2. «Մի լուսանկարի պատմություն», «Իմ ընտանիքի պատմությունը» թեմաներով՝ ուսուցիչ Լաուրա Գրքիկյանի ղեկավարմամբ:

3. «Գյումրի քաղաքի վահանակների լեզուն» թեմայով՝ ուսուցիչ Լալա Գրքիկյանի ղեկավարմամբ:

4. «Անցյալը ներկայում». «Ալեքսանդրապոլ, ճարտարապետական ժառանգությունը» թեմայով՝ ուսուցիչ Կարինե Ջիլֆիմյանի ղեկավարմամբ:

5. «Կարմիր ավետարանի հետքերով» թեմայով, ուսուցիչ՝ Մարիանա Մացոյանի ղեկավարմամբ:

Հայագիտության մեթոդմիավորման ուսուցիչների կողմից անցկացվել են նաև SS դասեր, պատրաստվել են ռեպորտաժներ:

Օտար լեզուների մասնախմբի աշխատանքները կներկայացնի մասնախմբի նախագահ Ա. Գրիգորյանը:

Թվարկված աշխատանքների կողքին եղել են նաև որոշ բացթողումներ, պլանավորված աշխատանքների թերացումներ, որոնք ընթացքում շտկվել են կամ իրականացվելու են գալիք ուսումնական տարում:

Ֆրանկոֆոնիա

Երկրորդ կիսամյակի ընթացքում ակնառու էր դպրոցի սերտ համագործակցությունը Հայաստանում ֆրանսիական դեսպանատան և ֆրանկոֆոն այլ կառույցների հետ:

Այս առումով մեծ է դպրոցի տնօրեն Նաիրա Թադևոսյանի և ֆրանսերենի ուսուցչուհի Արմինե Գրիգորյանի կողմից կատարված աշխատանքների արդյունավետությունը: Թիվ մեկ ավագ դպրոցը ակտիվ մասնակցություն ցուցաբերեց «Ֆրանկոֆոնիայի օրեր

2023»-ի շրջանակներում անցկացվելիք միջոցառումների մեկնարկին Գյումրիում, որի շրջանակներում հյուրընկալեցինք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանին, ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Անն Լույոյին, մարզային իշխանության ներկայացուցիչների, Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանին, համայնքի ղեկավարի տեղակալ Վահագն Մկրտչյանին:

Առաջատար լինելը պատիվ ու պատասխանատվություն է բոլորիս համար, որի համար շնորհակալ ենք մեր տնօրեն՝ տիկին Թադևոսյանին, ում ամենօրյա քրտնաջան աշխատանքի և ջանքերի շնորհիվ դպրոցը կարողանում է ապահովել իր հաղթարշավը և ուրույն ձեռագիրը: Մեր սիրելի տնօրենի շնորհիվ դպրոցն աչքի է ընկնում որպես վերապատրաստող կազմակերպություն և ԿԶՆԱԿ-Ի կողմից ընտրված մենթոր դպրոց:

Շնորհակալություն բոլոր ուսուցիչներին և աշխատակիցներին ողջ տարվա ընթացքում պատասխանատվության բարձր զգացումով աշխատելու համար:

Շնորհակալություն նաև իմ անմիջական գործընկերներին Արմինե Գրիգորյանին և Մանե Ալեքսանյանին:

Ավարտվեց ևս մեկ ուսումնական տարի իր հետ ամբարելով նոր ձեռքբերումներ, հաղթանակներ, հաջողություններ և անմոռանալի հիշողություններ: